



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՄԱՀՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
PROTECTION OF RIGHTS WITHOUT BORDERS NON-GOVERNMENTAL ORGANIZATION

Երևան, 11 հուլիսի 2017

Տեղեկանք
**Մարդու իրավունքների և արդարադատության ճգնաժամը Հայաստանում 2017 թվականի
հունվար-հուլիս ամիսներին**

“Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների” հասարակական
կազմակերպություն
0002 Երևան, ՀՀ, Ամիրյան 11
+374 10 505303
info@prwb.am

Սույն փաստաթուղթում տեղ գտած մտքերն ու կարծիքներն օգտագործելիս խնդրում ենք
պահպանել հղումը «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ..... 3

Միջամտություն փաստաբանի մասնագիտական գործունեությանը և խոչընդոտում..... 7

Փաստաբանների նկատմամբ հետապնդումներ..... 9

Բռնություններ փաստաբանների նկատմամբ..... 11

Հետապնդումներ դատական նիստերի մասնակցած քաղաքացիների նկատմամբ..... 12

Բռնություններ քաղաքացիների և ամբաստանյալների նկատմամբ..... 13

Դատաքննության ընթացքում ամբաստանյալների նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցները 15

Փաստաբանների զննության իրավաչափությունը մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքների տեսանկյունից 17

Դատական սակցիաների կիրառումը ամբաստանյալի պաշտպանության իրավունքի ենթատեքստում 23

Հրապարակային նիստերին մասնակցող անձանց անձնական տվյալների հավաքագրում 26

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ..... 27

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 31

Հավելված 1 34



ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Սույն տեղեկանքը պատրաստել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպությունը: Այն ամփոփում է «Մասնա Ծոեր» խմբի գործողությունների և դրան շաղկապված իրադարձությունների մասնակիցների նկատմամբ քրեական հետապնդումների հիմքով իրականացվող դատաքնությունների, ինչպես նաև Վահան Շիրխանյանի և այլոց գործերով ընթացող դատաքնությունների ժամանակ տեղի ունեցած մարդու իրավունքների խախտումները:

Տեղեկանքը ներառում է 2017 թվականի ապրիլից-հուլիսի 10-ն ընկած ժամանակահատվածում ընթացող հինգ դատավարությունները ¹, որոնց շրջանակներում դրսևորվել են մարդու իրավունքների, մասնավորապես՝ արդար դատաքնության իրավունքի խախտումներ:

Դատական Գործ N ² , ամբաստանյալ	Մեկնարկել է	Դատավոր	Դատաքնության իրականացման փաստացի վայր
ԵԷԴ/0101/01/16 ³ Արարատ Խանդոյան Արման Առաքելյան	2016 թվականի նոյեմբերի 11	Կենտրոն և Նորք-Մարաշ շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Մնացական Վոլոդյայի Մարտիրոսյան	Կենտրոն և Նորք-Մարաշ շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան թիվ 5 դահլիճ
ԵԿԴ/0298/01/16 ⁴ Վահան Շիրխանյան և այլոք	2016 թվականի դեկտեմբերի 2	Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Կարեն Ժորայի	Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի թիվ 5 դահլիճ

¹ Սույն դատական գործերն ընտրվել են բացառապես դրանց շրջանակներում դրսևորված խախտումների հիմքով: Դատավարությունների շրջանակներում քննվող քրեական գործերի մանրամասները տես Հավելված 1:

² Դատական գործերը հասանելի են datalex.am դատական տեղեկատվական կայքում:

³ Սույն գործը առանձնացված է նույն ժամանակահատվածում ՀՀ Քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածով հարուցված քրեական գործերից, քանի որ այս գործի դատաքնության ընթացքում դրսևորվել է փաստարանի նկատմամբ հետապնդում:

⁴ Այս դատական գործը ներկայացնում է պաշտպանի նկատմամբ իրականացված հետապնդումների փաստեր:



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ
 ՀԱՍԱՐԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
 PROTECTION OF RIGHTS WITHOUT BORDERS NON-GOVERNMENTAL ORGANIZATION

		Բեկթաշյան	
ԵԱԴԴ/0028/01/17 Ժիրայր Սեֆիլյան և այլոք	2017 թվականի մայիսի 26	Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Տաթևիկ Հրաչի Գրիգորյան	Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի մասնաշենք թիվ 1 դահլիճ
ԵԷԴ/0039/01/17 Պավել Մանուկյան և այլոք «Սասնա Ծռեր» խումբ-14 անձ	2017 թվականի հունիսի 8	Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանի դատավոր Արտուշ Վաչագանի Գաբրիելյան	Երևան քաղաքի Ավան և Նոր- Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի թիվ 1 դահլիճ
ԵԷԴ/0050/01/17 Արամ Մանուկյան և այլոք «Սասնա Ծռեր» խումբ- 18 անձ	2017 թվականի հուլիսի 3	Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանի դատավոր Արտուշ Վաչագանի Գաբրիելյան	Երևան քաղաքի Ավան և Նոր- Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի թիվ 1 դահլիճ

1. 2015 թվականի նոյեմբերի 25-ին Երևան քաղաքի Նորք Մարաշ թաղամասում ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունը վնասագերծեց մի խմբի, որի նպատակն, ըստ պաշտոնական տեղեկությունների, Հայաստանի տարածքում մի շարք ծանր հանցագործություններ իրականացնելն էր:

2015 թվականի դեկտեմբերի 19-ին ձերբակալվեց ՀՀ Պաշտպանության նախկին փոխնախարար Վահան Շիրխանյանը, ում մեղադրանք առաջադրվեց ՀՀ Քրեական օրենսգրքի 223-րդ հոդվածի հիման վրա՝ Հանցավոր համագործակցություն ստեղծելը կամ հանցավոր համագործակցությանը մասնակցելը, 235-րդ հոդված՝ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք,



պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը, 300-րդ հոդված՝ իշխանությունը յուրացնելը:

2016 թվականի դեկտեմբերի 2-ից Կենտրոնն և Նորք-Մարաշ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում նախագահող դատավոր Կարեն Բեկրաշյանի մասնակցությամբ մեկնարկել է դատաքննությունը:

2. 2016 թվականի հունիսի 20-ին ՀՀ ոստիկանությունը ձերբակալեց «Նոր Հայաստան» ընդդիմադիր շարժման առաջնորդ, ազատամարտիկ Ժիրայր Սեֆիլյանին: Նրա նկատմամբ մեղադրանք առաջադրվեց ՀՀ Քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածով՝ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը:

Ավելի ուշ, Ժիրայր Սեֆիլյանի և «Նոր Հայաստան» ընդդիմադիր շարժման, այլ մասնակիցների մեղադրանքը հարստացվեց և նրանց մեղադրանք առաջադրվեց «Սասնա ծռեր» գործողությունների համար՝ 2015 թվականի նոյեմբերից մինչև 2016 թվականի մայիսի 18-ն ընկած ժամանակահատվածում, կազմակերպված խմբի կազմում ապօրինի կերպով ձեռք է բերել, պահել և փոխադրել հրազեն և ռազմամթերք, նպատակ ունենալով զենքի գործադրմամբ, կյանքի համար վտանգավոր բռնություն գործադրելով զավթել և պահել ռազմավարական նշանակության շենքեր, շինություններ, սակայն իր կամքից անկախ հանգանամքներով ավարտին չի հասցվել:

2017 թվականի մայիսի 26-ից մեկնարկել է Ժիրայր Սեֆիլյանի և այլոց գործով դատական նիստը: Նիստերն իրականացվում են Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ նախագահող դատավոր Տաթևիկ Հրաչի Գրիգորյանի մասնակցությամբ:

3. 2016թ. հուլիսի 17-ի վաղ առավոտյան 31 անձից բաղկացած և իրեն «Սասնա ծռեր» կոչող խումբը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում հարձակվեց ոստիկանության պարեկապահակային ծառայության (ՊՊԾ) գնդի շենքի (հասցե՝ ք. Երևան, Մովսես Խորենացու փողոց, թիվ 158) վրա և գրավեց այն:

2016թ. հուլիսի 17-ին հարուցվեց քրեական գործ և խմբի անդամներին մեղադրանք առաջադրվեց 2015թ. ապրիլի 24-ին Երևան քաղաքում բռնություն գործադրելով, գույք ոչնչացնելով և վնասելով, ինչպես նաև իշխանության ներկայացուցչին զինված դիմադրություն ցույց տալով արտահայտված, հասարակական անվտանգությունը վտանգող զանգվածային անկարգություններ հրահրելու ուղղակի դիտավորությամբ, սկսած 2014թ. մայիսից կատարել է դրա կազմակերպմանն ուղղված նախապատրաստական գործողություններ, ինչպես նաև 2016թ. հուլիսի 17-ին կազմակերպված խմբի կազմում ապօրինի կերպով ձեռք է բերել, պահել, փոխադրել և կրել հրազեն ու ռազմամթերք, ապա կազմակերպված խմբի կազմում, զենքի գործադրմամբ, կյանքի և առողջության համար վտանգավոր բռնությամբ՝ զավթել և պահել է շենքեր, շինություններ և տրանսպորտային միջոցներ՝ զուգորդված դրանք ոչնչացնելու,



վնասելու սպառնալիքով, ինչպես նաև նույն եղանակներով պատանդ է վերցրել և պահել երկուսից ավելի անձանց, որոնք կատարել է զավթածը և պատանդներին ազատելու պայմանով պետությանը գործողություններ կատարելուն հարկադրելու նպատակով, նույն ժամանակ կազմակերպված խմբի կազմում, կյանքի համար վտանգավոր բռնություն գործադրելով, ինչպես նաև դրա գործադրման սպառնալիքով՝ հափշտակել է հրազեն ու ռազմամթերք, բացի այդ հրկիզման եղանակով դիտավորությամբ ոչնչացրել է տրանսպորտային միջոցներ սեփականատերերին պատճառելով առանձնապես խոշոր չափերի վնաս:

2017 թ. հունիսի 8-ից մեկնարկեց «Սասնա Շոեր» խմբի 14 անդամների գործով դատական նիստը: Թեև գործը ըստ ենթակայության հանձնվել է Էրեբունի և Նուբարաշեն վարչական դատարանին, նախագահող դատավոր Արտուշ Գաբրիելյանի կողմից կայացվել է արտագնա նիստ իրականացնելու որոշում և նիստերը տեղափոխվել են Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան⁵:

Դատական նիստերի դահլիճում դատավարությանը մասնակցող անձանց և ամբաստանյալների միջև առկա է ապակե պատ:



2017 թվականի հուլիսի 3-ից մեկնարկել է «Սասնա Շոեր» խմբի 18 անդամների գործով դատական նիստը: Այս գործը ևս ըստ ենթակայության հանձնվել է Էրեբունի և Նուբարաշեն վարչական դատարանին, նախագահող դատավոր Արտուշ Գաբրիելյանի կողմից կայացվել է արտագնա նիստ իրականացնելու որոշում և նիստերը տեղափոխվել են Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան⁶:

4. 2016 թ. հուլիսի 17-ից բազմամարդ հավաքներ կազմակերպվեցին մայրաքաղաք Երևանի Ազատության հրապարակում (Օպերայի և Բալետի թատրոնի առջևի տարածքը), ինչպես նաև վերոնշյալ գնդից մոտ 5 կմ հեռավորության վրա:

Այնուհետև, Ազատության հրապարակի հավաքներին զուգահեռ հավաքներ կազմակերպվեցին Խորենացու փողոցի ոստիկանական արգելապատնեշի մոտ:

⁵ Datalex.am, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ Թիվ ԵԷԳ/0039/01/17 քրեական գործով արտագնա դատական նիստ անցկացնելու վերաբերյալ, 16 հունիսի 2017թ., http://court.am/?l=lo&id=11&item_id=4357
⁶ Azatutyun.am, Այսօր մեկնարկեց «Սասնա ծոեր»-ի անդամներից 18-ի գործով առաջին դատական նիստը, 03 հուլիս 2017 թ., <https://www.azatutyun.am/a/28593060.html>



2016թ. հուլիսի 20-ին Խորենացու փողոցում հավաքի մի քանի մասնակիցներ քարեր նետեցին ոստիկանների ուղղությամբ, նրանք մոտեցան ոստիկանական պատնեշին՝ փորձելով պոկել ոստիկանների սաղավարտներն ու վահանները⁷:

2016 թվականի հուլիսի 20-ի դեպքերի կապակցությամբ, ի թիվս այլ քաղաքացիների, մեղադրանք առաջադրվեց Արարատ Խանդոյանին՝ զանգվածային անկարգությունների ժամանակ դրանց մասնակցի կողմից բռնություն գործադրելը, ջարդ կամ հրկիզում իրականացնելը, գույք ոչնչացնելը կամ վնասելը, հրազեն, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր գործադրելը կամ իշխանության ներկայացուցչին զինված դիմադրելը, մեղադրանքով:

2016 թվականի նոյեմբերի 11-ից մեկնարկել է դատական քննությունը, որն իրականացվում է Կենտրոն և Նորք-Մարաշ շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում, դատավոր Մնացական Վոլոդյայի Մարտիրոսյանի կողմից:

Ներկայացված գործերի դատական քննության ընթացքում արձանագրվել են մարդու իրավունքների խախտումներ, որոնց ամբողջականությունը հանգեցրել է Հայաստանում արդար դատաքննության իրավունքի աննախադեպ խախտումների և արդարադատության ճգնաժամի:

Ներկայացված քրեական գործերով, ըստ էության, շարունակվում են 2016 թվականի հուլիսի 17-ից հասարկության նկատմամբ ճնշումները, մասնագիտական գործունեության խոչընդոտումները:

Միջամտություն փաստաբանի մասնագիտական գործունեությանը և խոչընդոտում

2017 թվականի մայիսի 26-ից մեկնարկած Ժիրայր Սեֆիլյան և այլոք, 2017թ., հունիսի 8-ից մեկնարկած «Սասնա Շոեր» խմբի անդամների դատաքննություններին մասնակցելու համար դատարանի շենքի մուտքի մոտ իրականացվում է փաստաբանների անձնական զննություն⁸:

Դատարանի մուտքի մոտ մետաղորսիչ ձեռքի սարքի միջոցով իրականացվում է փաստաբանների մարմնի և անձնական իրերի ստուգում: Մետաղորսիչ սարքի ցանկացած ահազանգի դեպքում կարգադրիչների կողմից պահանջ է ներկայացվել բացել և ներկայացնել ահազանգի առիթ հանդիսացած առարկան: Նույնիսկ այն դեպքում, երբ ակնհայտ է, որ մետաղորսիչ սարքն ահազանգում է այնպիսի առարկաների առկայության պատճառով, ինչպիսիք են մետաղադրամները, հագուստի, պայուսակի մետաղ պարունակող դեկորացիաները, կարգադրիչները միևնույն է հարկադրում են հրապարակային բացել

⁷ «Խորենացու փողոցում բախումներ են ցուցաբարների եւ ոստիկանների միջեւ», Սիվիլնեթ, հուլիսի 20 2016 թ. <https://www.youtube.com/watch?v=OwCh2ot1fp0>

⁸ hrparak.am, Լարված մթնոլորտում տեղի ունեցավ Սեֆիլյանի գործով դատական նիստը. տեսանյութ, <http://hrparak.am/?p=148969&l=am%2Flarvac+mtnolortum+texivo%D6%82necav+sefilyani+gorcov+datakan+nisty+tesanyut+fotosharq>



պայուսակները, դրամապանակները, դատարկել գրպանները և դրանց պարունակությունը ցուցադրել հրապարակայնորեն, բոլորի ներկայությամբ⁹:

Այն դեպքում, երբ փաստաբանը ներկայացել է առանց պայուսակի, քրեական գործի նյութերը բաց պահելով ձեռքին, որպեսզի խուզարկության անհրաժեշտություն չառաջանա, կարգադրիչներն այս անգամ էլ պահանջել են բացել գրպանում առկա դրամապանակը¹⁰, որի մեջ առկա մետաղադրամների պատճառով մետաղորսիչ սարքն ահազանգել է:

2017 թվականի հունիսի 28-ին ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավար Կարեն Փոլադյանը պաշտոնապես հայտարարել է, որ դատական կարգադրիչները փաստաբաններին զննության են ենթարկում, և այդ կարգը սահմանված է ՀՀ Դատական օրենսգրքով¹¹: ՀՀ Փաստաբանների պալատի ղեկավար Արա Զոհրաբյանը բացատրել է, որ փաստաբանների զննությունը պայմանավորված է որոշակի անվտանգության միջոցառումների անհրաժեշտությամբ¹²:

Դատարան մուտք գործելու համար փաստաբանների զննությունը չի հանդիսանում միասնական պրակտիկայի դրսևորում, այն երբևէ նախկինում չի իրականացվել, իսկ դատական գործերի ընտրությունը, որոնց մասնակցության համար իրականացվում է անվտանգության ստուգում, կոնկրետ, կանխատեսելի և արդարացի ընտրության չափանիշների հիման վրա չի իրականացվել:

Ավելին, նույն դատական նիստերի մասնակցության համար դատարան ներկայացած դատախազներին դատական կարգադրիչները նույն կարգով անձնական զննության չեն ենթարկել: Արձանագրվել են նաև դեպքեր, թե ինչպես են դատախազները դուրս գալիս դատական նիստերի դահլիճից դատավորների համար նախատեսված դռնից¹³: Բացի այդ, դատական կարգադրիչները նույն դատական գործերով փաստաբանների մի մասին ենթարկել են անձնական զննության կամ խուզարկության, մյուսներին՝ ոչ¹⁴:

Կարգադրիչների կամայական և տարբերակված վերաբերմունքի մասին վկայում է նաև այն փաստը, որ փաստաբանների պալատի նախագահի և դատական դեպարտամենտի ղեկավարի ներկայությամբ թեև մետաղորսիչ սարքն ահազանգել է, այնուամենայնիվ, փաստաբանի պայուսակը բացելու պահանջը չի կիրառվել¹⁵: Անվտանգության ստուգման

⁹ hrparak.am, Լարված մթնոլորտում տեղի ունեցավ Սեֆիլյանի գործով դատական նիստը. տեսանյութ, <http://hrparak.am/?p=148969&l=am%2Fflarvac+mtnolortum+texivo%D6%82necav+sefilyani+gorcov+datakan+nisty+tesanyut+fotosharg>

¹⁰ Azatutyun.am, Դատավորը դահլիճից հեռացրեց Ժիրայր Սեֆիլյանին ու Ներսես Պողոսյանին <https://www.azatutyun.am/a/28581688.html>

¹¹ Azatutyun.am, Փաստաբաններին չեն խուզարկում, դա նրանց երևակայության արդյունքն է. Դատական դեպարտամենտի ղեկավար, 28 հունիսի 2017թ.

¹² Armtimes.com, Դեպարտամենտն ուզում է համոզվել, որ զենք-զինամթերք չի տեղափոխվում դատարան. ՓՊ նախագահ, <http://www.armtimes.com/hy/article/116492>

¹³ Armtimes.com, Ծոերի գործով դատախազները բարձրանում են դատավորի աշխատասենյակ. պաշտպանը վիղեռ է հրապարակել, 06 հուլիսի 2017թ., <http://armtimes.com/hy/video/2129>

¹⁴ Ժիրայր Սեֆիլյանն ու Ներսես Պողոսյանը ոտքի չկանգնեցին դատարանում, 27 հունիսի 2017, <https://www.youtube.com/watch?v=eJepZ2RxuU8>

¹⁵ Armtimes.com, Դեպարտամենտն ուզում է համոզվել, որ զենք-զինամթերք չի տեղափոխվում դատարան. ՓՊ նախագահ, <http://www.armtimes.com/hy/article/116492>



վայրում գտնվող ՀՀ Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը մոտեցել է, միջամտել է, որից հետո ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարը հրահանգել է կարգադրիչներին փաստաբանի պայուսակը բացելու պահանջը չեղարկել¹⁶:

Փաստաբանների նկատմամբ հետապնդումներ

Անվտանգության ստուգումը որպես հետապնդման հիմք

Դատական նիստերի մասնակցության համար կիրառվող անվտանգության ստուգման բոլոր այն դեպքերում, երբ փաստաբանները հրաժարվել են այլ անձանց ներկայությամբ հրապարակային ցուցադրել անձնական իրերը, կարգադրիչները դա որակել են որպես իրենց օրինական պահանջին ենթարկվելու մերժում: Այդ հիմքով կարգադրիչներն արգելել են փաստաբանների մուտքը դատական նիստերի դահլիճ, խոչընդոտել են մասնագիտական պարտականությունների իրականացումը:

Այնուհետև, կարգադրիչները գրություն են ներկայացրել դատավորներին՝ բացատրելով, որ փաստաբանները հրաժարվել են անձնական զննությունից, ինչի հիման վրա դատարանը դիմել է Փաստաբանների պալատի նախագահին՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու պահանջով¹⁷:

2017 թվականի հունիսի 27-ին դատարավորի կողմից նման զեկուցագիր է ներկայացվել այն բանի համար, որ Արայիկ Պապիկյանը հրաժարվել էր գրպանից հանել դրամապանակը¹⁸: Նույն դատական նիստի ընթացքում դատավորը սանկցիա է կիրառել ևս երկու փաստաբանի նկատմամբ, որի հիմքերը, սակայն, չեն ներկայացվել:

Փաստաբանները հաղորդել են այն դեպքերի մասին, երբ նույնիսկ չեն հասկացել ինչի համար են իրենց նկատմամբ կիրառվել սանկցիաները¹⁹:

Փաստաբանները նշել են նաև այնպիսի դեպքեր, երբ դատավորը գտել է, որ պաշտպանները ներգրավված չեն տվյալ գործով, բայց միաժամանակ սանկցիա է կիրառել պաշտպանների նկատմամբ²⁰:

¹⁶ Azatutyun.am, Սեֆիլյանի գործով դատական նիստը կրկին անցավ լարված մթնոլորտում, 30 հունիսի 2017թ., <https://www.azatutyun.am/a/28588638.html>

¹⁷ Azatutyun.am, Դատավորը դահլիճից հեռացրեց Ժիրայր Սեֆիլյանին ու Ներսես Պողոսյանին, 27 հունիսի 2017թ., <https://www.azatutyun.am/a/28581688.html>

¹⁸ Azatutyun.am, Դատավորը դահլիճից հեռացրեց Ժիրայր Սեֆիլյանին ու Ներսես Պողոսյանին, 27 հունիսի 2017, <https://www.azatutyun.am/a/28581688.html>

¹⁹ Hraparak.am, Ընդմիջումների սիրահար դատավորը, «պատժված» փաստաբանները, 27 հունիսի 2017թ., <http://hraparak.am/?p=150139&l=am/>

Armtimes.com, Արայիկ Պապիկյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ գրություն է ուղարկվել, 30 հունիսի 2017թ., <http://armtimes.com/hy/article/116537>

²⁰ Փաստինֆո, Դատարանն ամեն ինչ անում է, որ առանց ամբաստանյալների, առանց պաշտպանների լռելյայն դատավարություն իրականացվի. Լուսինե Սահակյան, 07 հունիսի 2017թ. <https://tinyurl.com/yddyx33u>



Պաշտպանյալի հանձնարարությունների կատարումը որպես հետապնդումների հիմք

Փաստաբանների նկատմամբ կիրառվել է սանկցիա նաև բոլոր այն դեպքերում, երբ պաշտպանները հետևել են իրենց պաշտպանյալների հանձնարարությանը:

2017 թվականի ապրիլի 27-ին դատավորը կարգապահական պատասխանատվություն կիրառելու համար դիմել է ՀՀ Փաստաբանների պալատ այն բանի համար, որ Արա Ղարազյոզյանը հետևել է իր պաշտպանյալ Արարատ Խանդոյանի պահանջին և առանց նրա ներկայության դատական նիստին չի մասնակցել²¹:

Նույն կերպ 2017 թվականի հունիսի 23-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արմեն Բեկթաշյանը սանկցիա է կիրառել պաշտպան Հայկ Ալումյանի նկատմամբ այն բանի համար, որ իր պաշտպանյալին դատարանի դահլիճից հեռացնելուց հետո պաշտպանը ևս հեռացել է²²:

2017 թվականի հունիսի 27-ին Սեֆիլյանի ու մյուսների գործով դատարանը դատական սանկցիա է կիրառել փաստաբաններ Տիգրան Հայրապետյանի և Արայիկ Պապիկյանի նկատմամբ՝ նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար փաստաբանական պալատին դիմելու ձևով, այն բանի համար, որ հրաժարվել են իրենց պաշտպանյալի բացակայությամբ մասնակցել դատական նիստին²³:

2017 թվականի հունիսի 28-ին նիստերի դահլիճում գտնվող ոստիկանները թույլ չեն տվել պաշտպանյալը գրություն հանձնել իր պաշտպան Արա Ղարազյոզյանին: Ոստիկանները վերցրել էին այդ գրությունը և դրա բովանդակությունը հրապարակելուց հետո դիմել են ՀՀ Փաստաբանների պալատ՝ Արա Ղարազյոզյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար²⁴:

Փաստաբանի խոսքի ազատությունը որպես հետապնդման հիմք

2017 թվականի հունիսի 28-ին փաստաբան Մուշեղ Շուշանյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու պահանջ է ներկայացրել ՀՀ ոստիկանությունը՝ հիմնավորելով, որ փաստաբանը վիրավորական արտահայտություններ է հնչեցրել ոստիկանության հասցեին²⁵:

2017 թվականի հունիսի 30-ին նման պահանջ է ներկայացվել նաև ՀՀ Դատախազության կողմից փաստաբան Արայիկ Պապիկյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար: Դատախազությունը հիմնավորել է, թե իբր փաստաբանն անպարկեշտ

²¹ Aravot.am, փաստաբանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ, 27 մայիսի 2017թ., <http://www.aravot.am/2017/05/27/888240/>
²² 168hours.am, «Դատարանն ամեն անգամ կենտրոնանում է Վահան Շիրխանյանի չկանգնելու վրա, և այդ կերպ ստացվում է, որ դատական նիստերը փակուղի են մտնում», 23 հունիսի 2017թ., <https://168.am/2017/06/23/811854.html>
²³ News.am Սեֆիլյանի և մյուսների գործ. դատարանը Տիգրան Հայրապետյանի և Արայիկ Պապիկյանի նկատմամբ սանկցիա կիրառեց, 27 հունիսի 2017թ., <https://news.am/arm/news/397361.html>
²⁴ Այսօր, Բացահայտվել է Արեգ Կյուրեղյանի գրության բովանդակությունը. Դատավորը դիմել է Փաստաբանների պալատ. Լուսանկարներ, 29 հունիսի 2017թ., goo.gl/HuyG2acontent_copyCopy short URL
²⁵ Irates.am, Վլադիմիր Գասպարյանը դիմել է փաստաբանների պալատի նախագահին, <http://www.irates.am/hy%27/1498764687>



ձեռակերպումներով գնահատականներ է տվել պետական իշխանության մարմիններին, իրավապահ մարմիններին ու նրանց գործունեությանը²⁶:

2017թ. ապրիլի 27-ից հունիսի 28-ը ընկած ժամանակահատվածում գրանցվել է ներկայացված հիմքով առնվազն 15 փաստաբանի նկատմամբ ՀՀ փաստաբանների պալատի կողմից կարգապահական պատասխանատվություն կիրառելու միջնորդություն:

Ներկայացված դատական գործերի քննության շրջանակներում փաստաբաններին պատասխանատվության ենթարկելու պահանջների ներկայացումը դատարանների և իշխանության այլ մարմինների կողմից շարունակական բնույթ է կրում²⁷ ընթացող դատաքննություններով:

Բռնություններ փաստաբանների նկատմամբ

2017թ հունիսի 28-ին Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի շենքի մերձակա տարածքում, որտեղ ընթանալու էր «Սասնա ծռեր» խմբի անդամների դատավարությունը, տեղակայվել են մեծ թվով ոստիկանական ուժեր, և քաղաքացիների մուտքը դատարան արգելվել է:

Այդ նույն տարածքում ոստիկանությունը մեկուսացրել է փաստաբաններին և արգելել է իրավական աջակցություն տրամադրել բերման ենթարկվող քաղաքացիներին:

2017թ., հունիսի 28-ին Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի շենքի մոտ փաստաբան Լուսինե Սահակյանի նկատմամբ ոստիկանությունը բռնի ուժ է գործադրել՝ արգելելով անցնել ոստիկանության պատնեշի այն հատվածը, որտեղ բերման էր ենթարկվել նրա պաշտպանյալը²⁸: Նույն կերպ, խոչընդոտել է նաև փաստաբան Արա Զաքարյանի գործունեությունը և նա չի կարողացել իր պաշտպանյալի հետ ոստիկանական բաժանմունք գնալ:

Ներկայացված դատական գործերի քննության շրջանակներում, ըստ էության, փաստաբանները նույնականացվել են իրենց պաշտպանյալների հետ և նրանց նկատմամբ հետապնդումներ են սկսվել իրենց մասնագիտական պարտականությունները կատարելու առնչությամբ: Փաստաբանների պնդմամբ՝ նման գործողություններով իշխանությունը փորձում է ճնշել իրենց, մեկուսացնել դատավարությունները և ստեղծել դատավարության

²⁶ Armtimes.am, Արայիկ Պապիկյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ գրություն է ուղարկվել, 30 հունիսի 2017թ. , <http://www.armtimes.com/hy/article/116537>

²⁷ Azatutyun.am, Վիճաբանություն կարգադրիչների ու փաստաբանների միջև՝ «Սասնա ծռեր»-ից 18-ի գործով առաջին դատական նիստի մեկնարկին, 03 հուլիսի 2017թ., <https://www.azatutyun.am/a/28593161.html>

²⁸ armtimes.com, Բերետավորները բռնություն են կիրառել Լուսինե Սահակյանի նկատմամբ.կա բերման ենթարկված. վիդեո <http://armtimes.com/hy/article/116291>



իրականացման պատրանք, որի արդյունքում «Սասնա Շռեր» խմբի անդամները պատասխանատվության կենթարկվեն դռնփակ դատական քննության շրջանակներում ²⁹:

Հետապնդումներ դատական նիստերի մասնակցած քաղաքացիների նկատմամբ

2017 թվականի մայիսի 26-ից մեկնարկած Ժիրայր Սեֆիլյան և այլոք, ինչպես նաև 2017 թվականի հունիսի 8-ից մեկնարկած «Սասնա Շռեր» խմբի դատավարությունների համար դատարանի շենք մուտք գործելու համար առաջին անգամ սահմանվել և իրացվել է անվտանգության ստուգման խստացված գործընթաց:

Դատարանի շենքի մոտ տեղակայվել են ոստիկանական մեծաթիվ ուժեր, որոնց քանակը մի քանի անգամ գերազանցում է դատաքննությանը մասնակցելու համար ներկայացած ամբաստանյալների հարազատների և ընկերների թիվը:



Բաց, հրապարակային դատաքննության մասնակցության համար ներկայացած քաղաքացիները ենթարկվում են անձնական զննության: Ավելին՝ դռնփակ դատական նիստերի մասնակցության համար դատարան մուտք գործելիս քաղաքացիները «հաշվառվում են»՝ դատական կազադիրչների կողմից հավաքագրվում են քաղաքացիների անձնագրային տվյալները, ինչպես նաև տեղեկություններ այն մասին, թե դատաքննության մասնակցության համար ներկայացած անձանցից ով, ում բարեկամն է ³⁰: Դատավարության մասնակցած քաղաքացիներից մի քանիսը նիստերին մասնակցելուց հետո տեղեկացրել է, որ ոստիկանության աշխատակիցներն այցելել են իրենց, պահանջել, որ դատական նիստերին այլևս չմասնակցի: Եղել են անձինք նաև, ում ոստիկանությունը բերման է ենթարկել և

²⁹ «Ազատության TV» լրատվական կենտրոն, 03 հուլիսի 2017թ., -30 րոպե, Մուշեղ Շուշանյանի հարցազրույց, <https://www.youtube.com/watch?v=RrnBWP4wz5I>

³⁰ Hetq.am, Դատարանում ֆիքսում են՝ ով ում բարեկամն է. ոմանց այցելել է թաղային ոստիկանը, 27 հունիսի 2017թ., <http://hetq.am/arm/news/80149/dataranum-fiqsum-en-ov-um-barekamm-e-omanc-aycelel-e-taxayin-ostikany.html#.WVLI7zPWL88.facebook>



նստիկանության բաժնում տեղեկացրել, որ Facebook սոցիալական ցանցի անձնական էջում կատարված գրառումները հանցակազմ են պարունակում և ստիպել են հեռացնել դրանք³¹:

2017 թվականի հունիսի 30-ին «Հիմնադիր Խորհրդարանի» անդամ, դատական նիստերի ակտիվ մասնակից Փայլակ Թևանյանը բերման է ենթարկվել նստիկանության կողմից, իսկ այնուհետև նրա նկատմամբ մեղադրանք է առաջադրվել դատական կարգադրիչին ապտակելու հիմքով ³² : Ըստ Փայլակ Թևանյանի, շինծու քրեական մեղադրանքով իշխանությունները նպատակ են հետապնդում ճնշել և վախեցնել դատավարությանը մասնակցելու ցանկություն ունեցող քաղաքացիներին:

Հատկանշական է, որ թեև դատական դեպարտամենտը իրազեկում է տարածել դատական նիստերն արտագնա իրականացնելու մասին ³³ , սակայն նման կարգով անվտանգության ստուգում իրականացնելու մասին նախապես չի հայտարարվել, չի սահմանվել և հրապարակայնորեն չի ծանուցվել արգելված իրերի և առարկաների կամ անվտանգության տեսանկյունից ռիսկային համարվող իրերի ցանկի մասին:

Բացի այդ, գրեթե զուգահեռաբար ՀՀ Քրեական օրենսգրքով նախատեսված նույն ծանրության աստիճանի քրեական գործերի դատաքնության մասնակցության համար անվտանգության ստուգման նույն կարգը չի կիրառվում (տես Վահան Շիրխանյան և այլոք)³⁴:

Բռնություններ քաղաքացիների և ամբաստանյալների նկատմամբ

2017 թվականի հունիսի 28-ին Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում և շենքից դուրս նստիկանությունն ուժեր է կենտրոնացրել: Ոստիկանությունն արգելել է քաղաքացիներին դատարանի շենք մտնել՝ պատճառաբանելով, որ նիստերի դահլիճում բոլոր տեղերն արդեն զբաղեցված են:

Այդ վայրից նստիկանությունը քաշելով, ծեծելով բերման է ենթարկել քաղաքացիների³⁵:

2017 թվականի հունիսի 28-ին դատական նիստը բացելուց առաջ հենց դատական նիստերի դահլիճում կարգադրիչները և ոստիկանությունը բռնության են ենթարկել նիստի մասնակից ամբաստանյալներ Արեգ Կյուրեղյանին, Սմբատ Բարսեղյանին և Մխիթար Ավետիսյանին³⁶:

³¹ Hetq.am, խտրական վերաբերմունք՝ պաշտպանական կողմի նկատմամբ, 13 հունիսի 2017 <http://hetq.am/arm/news/79709/khtrakan-verabermunq-pashtpanakan-koxmi-nkatmamb.html>

³² «Ազատություն» TV-ի լրատվական կենտրոն, 3-ը հուլիսի, 2017թ., -25 րոպե, Փայլակ Թևանյանի հարցազրույցը, <https://www.youtube.com/watch?v=RmBWP4wz5I>

³³ Տես հղում 5

³⁴ Տես, օրինակ, Վահան Շիրխանյան և այլոք դատական գործը

³⁵ Azatutyun.am, «Սասնա ծռերի» գործով դատավարությունը կրկին հետաձգվեց, 28 հունիսի 2017թ., <https://www.azatutyun.am/a/28583645.html>

³⁶ Հելսինկյան ասոցացիա, անկախ լրագրողների ցանց, Աննախաղեպ բռնություններ՝ «Սասնա ծռեր» - ի գործով դատավարության ժամանակ, 28 հունիսի 2017թ., <https://www.youtube.com/watch?v=aWHirBp8kcg>



Նույն օրը, նույն դատարանի նկուղում ոստիկանության կողմից Արարտ Խանդոյանը, Արեգ Կյուրեղյանը, Սմբատ Բարսեղյանը և Մխիթար Ավետիսյանը ենթարկվել են շարունակական ծեծի: Փաստաբանի փոխանցմամբ՝ ոստիկանները 10-15 հոգով ծեծի են ենթարկել Արարատ Խանդոյանին: Փաստաբանը վնասվածքներ է արձանագրել Արարատ Խանդոյանի գլխին, ոտքերին և երիկամների շրջանում³⁷:

Արեգ Կյուրեղյանի փաստաբանը տեղեկացրել է, որ Արեգ Կյուրեղյանին ոստիկանները տապալել են գետնին, այնուհետև ձեռնաշղթաներ հագցրել և շարունակել ծեծել:

Թեև այս փաստերը հայտնի են եղել դատավորին, վերջինս ոստիկանության գործողությունների վերաբերյալ հաղոդում չի ներկայացրել:

ՀՀ ոստիկանությունը հերքել է այն տեղեկությունը, թե իբր «Սասնա Ծռեր» խմբի անդամները բռնության են ենթարկվել: Ոստիկանությունը նշել է, որ հասարակական կարգը խախտելու և ոստիկանության ծառայողների օրինական պահանջներին չենթարկվելու համար այդ անձինք դուրս են բերվել դատական նիստերի դահլիճից: Հետո նրանք ոստիկանության ծառայողների նկատմամբ ցուցաբերել են ակտիվ անհնազանդություն, անձնապես վիրավորել ոստիկաններին: Անհնազանդությունը խափանելու նպատակով հիշյալ ամբաստանյալների նկատմամբ կիրառվել է համաչափ ֆիզիկական ուժ³⁸: Ըստ ոստիկանության՝ «Սասնա Ծռեր» խմբի անդամների մոտ վնասվածքներն առաջացել են, քանի որ նրանք հարվածել են խցերի դռներին ձեռքերով և ոտքերով:

Փաստաբաններն ահազանգել են նաև, որ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում ծեծի ենթարկված և մարմնական վնասվածքներ ունեցող ամբաստանյալներին պատշաճ բուժօգնություն չի ցուցաբերվել: Թեև նրանց վնասվածքներն արձանագրվել են, սակայն համապատասխան ախտորոշում չի իրականացվել և ցավերը մեղմելու համար նրանց միայն ցավազրկողներ են հատկացրել:

2017 թվականի հունիսի 29-ին ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբն այցելել է վնասվածքներ ստացած անդամներին, սակայն դիտորդներին թույլ չեն տվել տեսնել նրանց³⁹:

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներն այցելել և հանդիպել են խմբի անդամներին, արձանագրել նրանց մարմնական վնասվածքները⁴⁰, որի հիման վրա Մարդու իրավունքների պաշտպանը տվյալներն ուղարկել է ՀՀ Գլխավոր դատախազություն քրեական վարույթ հարուցելու պահանջով:

³⁷ «Սասնա Ծռեր»-ից չորսին, փաստաբանների վկայությամբ, ոստիկանները դաժան ծեծի են ենթարկել, Published on Jun 29, 2017թ. , <https://www.youtube.com/watch?v=NUbjqe72ph4>

³⁸ ՀՀ Ոստիկանություն, Հայտարարություն, 29 հունիսի 2017թ., <http://www.police.am/news/view/hy292017.html>

³⁹ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ, Դիտորդների Խմբին արգելել են հանդիպել «Սասնա Ծռեր» խմբի անդամներին, 01 հունիսի 2017թ., <http://pmg.am/index.php/hy/news/announcements/390-2017-07-01-16-42-14>

⁴⁰ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան, Հայտարարություն Քրեական վարույթ անհապաղ նախաձեռնելու անհրաժեշտության վերաբերյալ, 30 հունիսի 2017թ., <http://www.ombuds.am/media/statement-on-the-necessity.html>



Դատաքննության ընթացքում ամբաստանյալների նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցները

2016 թվականի դեկտեմբերի 2-ից մեկնարկած Վահան Շիրխանյան և այլոք գործով դատաքննության, ինչպես նաև ներկայացված մյուս չորս դատական քննությունների ընթացքում նախագահող դատավորը սանկցիաներ է կիրառել նաև ամբաստանյալների նկատմամբ՝ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու հիմքով:

Որպես անհարգալից վերաբերմունք՝ դատարանը գնահատել է ամբաստանյալի կողմից առանց դատավորի թույլտվության խոսելը, այն դեպքերը, երբ վնասվածքներ և առողջական խնդիրներ ունեցող ամբաստանյալը չի կարողացել ոտքի կանգնել:

Ընդհանուր առմամբ, 2017 թվականի մայիսի 26-ից մեկնարկած Ժիրայր Սեֆիլյան և այլոք, ինչպես նաև հունիսի 8-ից, հուլիսի 3-ից մեկնարկած դատական նիստերի շրջանակներում ըստ էության քննություն չի իրականացվել: Ամբաստանյալների և նրանց պաշտպանների նկատմամբ կիրառվել են սանկցիաներ և նրանք հեռացվել են դատական նսիտերի դահլիճից:

2017 թվականի հունիսի 23-ին Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Կարեն Բեկթաշյանը սանկցիա է կիրառել և ոտքի չկանգնելու, և այդ հիմքով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու համար դատարանի դահլիճից հեռացրել է Վահան Շիրխանյանին: Ընդ որում, Վահան Շիրխանյանը դատարանի դահլիճ է բերվել հաշմանդամի սայլակով⁴¹, ինքնուրույն տեղաշարժի և քայլելու հնարավորություն չունի: Ավելին՝ Վահան Շիրխանյանի պաշտպանը տեղեկացրել է, որ նիստերի դահլիճից դուրս գալիս դատավորը սկսել է բարձր գոռալ Վահան Շիրխանյանի վրա ասելով՝ դու ո՞վ ես, որ ինձ ասես, որ ես ինչ-որ մի բան չեմ հասկանում:

2017 թվականի հունիսի 30-ին դատարանը սանկցիա է կիրառել և դատական նիստերի դահլիճից հեռացրել է Սեֆիլյան և այլոք գործով երկու ամբաստանյալներին 6 ժամով, այն բանի համար, որ նրանք ոտքի չեն կանգնել⁴²:

2017 թվականի հուլիսի 3-ին դատարանը սանկցիա է կիրառել միանգամից 16 ամբաստանյալի նկատմամբ և նրանց հեռացրել է դատական նիստի դահլիճից⁴³: Նույն կերպ,

⁴¹ Lragir.am, Դատավոր Բեկթաշյանի սանկցիայի կիրառման չափանիշները, 23 հունիսի 2017թ., <http://www.lragir.am/index/arm/0/right/view/155992>

⁴² News.am TV, Սեֆիլյանի և նրա ընկերների հանդեպ սանկցիա կիրառվեց. Սեֆիլյանը վիճեց դատավորի հետ, 30 հունիսի 2017 թ., <https://www.youtube.com/watch?v=0TtZIP9QPVM>

⁴³ Azatutyun.am, «Սասնա ծռեր»-ի 18 անդամներից 16-ը հեռացվեցին նիստերի դահլիճից, 03 հուլիսի 2017թ., <https://www.azatutyun.am/a/28593282.html>



2017 թվականի հուլիսի 6-ին դատական նիստերի դահլիճ են բերվել 18 ամբաստանյալներից 3-ը, քանի որ 15 ամբաստանյալների նկատմամբ դատավորը կիրառել էր սանկցիա և 6 ժամով նրանց հեռացրել էր նիստերի դահլիճից⁴⁴:

Ամբաստանյալների նկատմամբ կիրառվող սանկցիաները և նիստերի դահլիճից հեռացումները շարունակական բնույթ են կրում, և յուրաքանչյուր անգամ սանկցիա կիրառելիս դատարանը հայատարարում է ընդմիջում, դադարեցնում նիստը: Հարկ է նշել նաև, որ դատավորը նշված բոլոր դեպքերում հնարավորություն չի ընձեռել փաստաբաններին և նրանց պաշտպաններին առարկել կայացվող որոշումների դեմ կամ առհասարակ խոսել:

⁴⁴ Armtimes.com, Սասնա ծռերի գործով 18 ամբաստանյալից դատարան է բերվել ընդամենը 3-ը , 06 հուլիսի 2017թ. , <http://www.armtimes.com/hy/article/116939>



Փաստաբանների զննության իրավաչափությունը մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքների տեսանկյունից

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) ողջ էությունը միտված է ապահովելու անձի արժանապատվության և ազատության նկատմամբ հարգանքը: Այս տեսանկյունից, Կոնվենցիայի 8-րդ հոդվածով սահմանված մարդու անձնական կյանքի նկատմամբ հարգանքը վերջնակետ չէ, այլ միջոց, որով երաշխավորվում է մարդու արժանապատվության պաշտպանությունը⁴⁵: Կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված անձնական կյանքի պաշտպանությունը տարածվում է նաև անձի մասնագիտական գործունեության շրջանակների վրա:

Աշխատանքային հարաբերությունների ընթացքում ձևավորվում և այլ անձանց հետ շփումներ են հաստատվում, ինչը պահանջում է մասնագիտական և գործարար կյանքի պաշտպանություն անձնական կյանքի պաշտպանության ներքո: Ավելին՝ մասնագիտական և գործարար կյանքի գործողությունները տեսականորեն կարող են ներառել գաղտնիության այս կամ այն աստիճան: Ակնհայտ է, որ իրավաբանի (փաստաբան) և նրա շահառուի միջև ձևավորվում են գաղտնիք պարունակող հարաբերություններ, ուստի իրավաբանի (փաստաբանի) մասնագիտական գործունեությունը ենթակա է պաշտպանության Կոնվենցիայի 8-րդ հոդվածի ներքո⁴⁶:

Դատական կարգադրիչների կողմից փաստաբանների զննության գործընթացը (իրավաչափության և համաչափության մեջ) դիտարկվում է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի և դրանով սահմանված պաշտպանության երաշխիքների ներքո: Անվիճելի է, որ փաստաբանների (պաշտպանների) զննությունը հանդիսանում է միջամտություն Կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված անձնական կյանքի նկատմամբ և անհրաժեշտ է դիտարկել, թե արդյոք նման միջամտությունն իրավաչափ է:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը անձնական կյանքի միջամտության իրավաչափությունը գնահատել է երեք հիմնական չափանիշների ներքո.

- Միջամտությունը պետք է լինի օրենքին համապատասխան (օրենքով սահմանված),
- Միջամտությունը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ,
- Միջամտությունը պետք է անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում:

Անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությանը

Միջամտությունը համարվում է անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությանը, եթե առկա է «գերակա հանրային շահ», միջամտությունը համաչափ է հետապնդվող իրավաչափ

⁴⁵ Christine Goodwin v. The United Kingdom, app. no N 28957/95, 11 June 2002, §§ 90-91

⁴⁶ Niemietz v. Germany, App. no. 13710/88, 16 December 1992, § 28



նպատակին, և միջամտության համար իշխանությունները ներկայացնում են վերաբերելի և բավարար պատճառներ:

Դատարանը հաստատված է համարել, որ հանցագործությունների դեմ պայքարը (...) ենթադրում է զննության և անձի նույնականացման համար ժամանակակից գիտական և տեխնոլոգիական միջոցների օգտագործում: Այդ միջոցների օգտագործումն ինքնին խնդիր չի առաջացնում, բայց դրանց օգտագործման կարգը կարող է հանգեցնել մարդու անձնական կյանքի միջամտությանը⁴⁷:

Այս առումով, անհրաժեշտ է, որ դրանք բավարարեն նաև «օրենքին համապատասխան» (օրենքով սահմանված) պահանջի չափանիշները:

Դատարանը սահմանել է, որ «օրենքին համապատասխան» (օրենքով սահմանված) չափանիշը պահանջում է հետևյալ պարտադիր պայմանների պահպանումը.

- 1) միջամտությունը պետք է սահմանված լինի ներպետական օրենսդրությամբ, 2) համապատասխանի իրավունքի գերակայության սկզբունքին: Այս տեսանկյունից, ներպետական օրենսդրությունը պետք է հասանելի լինի, կանխատեսելի և ունենա ճգրիտ (դիպուկ) ձևակերպումներ, որը հնարավորություն կտա անձին կարգավորել իր վարքագիծը:

Որպեսզի ներպետական օրենսդրությունը համապատասխանի այս պահանջին, այն պետք է.

- Անձի համար ապահովի իրավական պաշտպանություն հնարավոր կամայական միջամտությունից,
- պետք է բավարար հստակությամբ սահմանի իրավասու պետական գործակալների հայեցողության շրջանակները,
- պետք է սահմանի պետական գործակալների լիազորությունների իրականացման միջոցները:

Դատական կարգադրիչների գործողությունները և մասնավորապես՝ դատական կարգադրիչների կողմից զննության իրականացման գործընթացը սահմանվում է ՀՀ Դատական օրենսգրքով: ՀՀ Դատական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանվում է դատական կարգադրիչի պարտականությունը՝ *«...ապահովել դատարանում դատավորի, դատավարության մասնակիցների, դատական ծառայողների և այլ անձանց կյանքի, առողջության և արժանապատվության, իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը և դատարանի տարածքի պահպանումը հանցավոր և հակաիրավական այլ ոտնձգություններից»:*

Այնուհետև, նույն օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը սահմանում են դատական կարգադրիչի իրավասությունները՝ *պարզելու դատարան մուտք գործող, դատական նիստերի դահլիճում գտնվող, ինչպես նաև դատական սանկցիայի ենթարկված անձի ինքնությունը, դատարանի որոշման հիման վրա դատական նիստերի*

⁴⁷ S. and Marper v. The United Kingdom, App. no. 30562/04 30566/04, §§ 101-105, 04 December 2008.



դահլիճից հեռացնելու անձին կամ սահմանափակելու այդ որոշման մեջ մատնանշված անձի մուտքը, 3) գննության ենթարկելու դատարան կամ դատական նիստերի դահլիճ մուտք գործող անձանց և նրանց իրերը:

Եթե ընդունենք, որ դատական կարգադրիչների գործողությունները սահմանված են ներպետական օրենսդրությամբ, ապա պետք է գնահատենք նաև, թե արդյոք դրանք համապատասխանում են օրենքի որակական հատկանիշների համար առաջադրած պահանջներին, այն է՝ բացառում են կամայականությունը, սահմանում են կարգադրիչների հայեցողական լիազորությունների շրջանակը և հստակ սահմանում են լիազորությունների իրականացման միջոցները:

Օրենքն ընդհանրական կարգով սահմանում է դատական կարգադրիչների իրավասություններն անձի ինքնությունը պարզելու, անձին դատական նիստերի դահլիճից հեռացնելու և դատարան կամ դատական նիստերի դահլիճ մուտք գործող անձանց, նրանց իրերի գննության մասով: Սակայն դրանց իրականացման կարգի և իրականացման միջոցների վերաբերյալ ներպետական օրենսդրությամբ (օրենք, ենթաօրենսդրական որևէ այլ ակտ) որևէ կարգավորում չի ապահովում:

Օրինակ, անձնական գննության իրականացման այնպիսի գործընթաց, որը նախատեսում է տեխնիկական սարքավորումների օգտագործում՝ մետաղորսիչ սարքեր, մարմնական գննության անվտանգության սկաններներ և այլ սարքավորումներ, իրավական որևէ ամրագրում չունի: Բացակայում է նաև դատական կարգադրիչների կողմից օգտագործվող տեխնիկական սարքավորումների կիրառման ընթացակարգային որևէ կանոն, որին պետք է հետևեն դատական կարգադրիչները: Ակնհայտ է, որ ՀՀ օրենսդրությունը էլեկտրոնային տեխնոլոգիաների զարգացմանը համարժեք փոփոխությունների չի ենթարկվել և նման տեխնոլոգիաների օգտագործմամբ իրականացվող գործողություններն իրավական ամրագրում չունեն: Սա հանգեցնում է մի իրավիճակի, որտեղ իշխանության գործակալների՝ կարգադրիչների կողմից կամայականության դրսևորումն անկառավարելի է և անխուսափելիորեն բերում է մարդու իրավունքների խախտման, ինչը և արձանագրվել է ներկայացված գործերի առնչությամբ: Բացի այդ, դատարան մուտք գործելու համար փաստաբանների գննությունը չի հանդիսանում միասնական պրակտիկայի դրսևորում, այն երբևէ նախկինում չի իրականացվել, իսկ դատական գործերի ընտրությունը, որոնց մասնակցության համար իրականացվում է անվտանգության ստուգում, կոնկրետ, կանխատեսելի և արդարացի ընտրության չափանիշների հիման վրա չի իրականացվել:

Ավելին՝ փաստաբանները նշել են, որ դատական նիստերին մասնակցող դատախազներին նույն սկզբունքով գննության չեն ենթարկում, արձանագրվել են դեպքեր, երբ նույն քրեական գործով դատական նիստին մասնակցող փաստաբաններից մի քանիսին ենթարկել են գննության, մյուսներին ոչ⁴⁸:

Դատական կարգադրիչների լիազորությունների իրականացման նման պրակտիկան և այն օրենսդրական կարգավորումը, որի հիման վրա իրականացվում է, չի կարող բավարարել

⁴⁸ Տես հղում 13,14



Եվրոպական դատարանի կողմից առաջադրված «օրենքին համապատասխան» (օրենքով սահմանված) պահանջը, հետևաբար կազադրիչների կողմից նման միջամտությունն իրավաչափ համարվել չի կարող:

Հատկանշական է, որ անվտանգության տեսանկյունից հանրային տարբեր շինություններում (այդ թվում նաև դատարաններում) տեխնիկական միջոցների օգտագործմամբ անձնական զննության պրակտիկան ներդրվել և կիրավում է տարբեր երկրներում: Ներդրված նման պրակտիկան ամբողջությամբ հիմնվում է հստակ մշակված իրականացման կարգի վրա, որը ներառում է, օրինակ, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ անձի զննության մեթոդները, օգտագործվող տեխնիկական միջոցների նկարագրությունը, դրանց տեխնիկական հատկանիշները, սարքավորման ահազանգի դեպքում այն օգտագործողի գործողությունները և այլ մանրամասներ, որոնք զննության ենթարկվողի համար հստակ և կանխատեսելի են դարձնում իր վարքագիծը և զննության գործընթացը:

Դատարաններում անվտանգության նկատառումներով ստուգման և զննության իրավական

կանոնակարգեր գործում են տարբեր երկրներում դատարանների գործունեության անվտանգության ապահովման համար: ԱՄՆ-ում դատարանում անվտանգության ապահովման նպատակով իրականացվում են մի խումբ միջոցառումներ, այդ թվում ռիսկերի գնահատում, անձնական զննություն: Նման աշխատանքներն իրականացվում են «Դատարանի կանոններ» կոչվող իրավական փաստաթղթի համաձայն, որի հիման վրա մշակվել և կիրառվում են մի շարք ուղեցույցներ, նման աշխատանք իրականացնող ծառայողներն անցնում են պարտադիր վերապատրաստման դասընթացներ և այլն⁴⁹: Կանոնակարգը կոնկրետ սահմանում է նաև այն անձանց շրջանակը, ովքեր անվտանգության նման ստուգում չեն անցնում կամ անցնում են տարբերակված կարգով:

Օրինակ Ինդիանայի հարավային օկրուգի դատարանի կանոնակարգից

Դատարանի շենք բոլոր մուտքերի մոտ առկա են սկաներներ, ինչպես նաև, ԱՄՆ Մարշալ ծառայության կողմից կիրառվում են մետաղորսիչ սարքեր:

Նույն կանոնակարգով նախատեսվում է արգելված իրերի ցանկը, որոնց առկայությունը դատարանի շինությունն մուտք գործելիս արգելվում է:

Մետաղորսիչ սարքերը նախատեսված են օրենքով նախատեսված արգելված իրերը հայնտաբերելու համար, օրինակ՝ զենք, պայթուցիկ նյութեր, արցունքաբեր գազ, դանակներ կամ այլ իրեր: Եթե մետաղորսիչն ահազանգում է, ապա անձը անցնում է լրացուցիչ զննություն՝ մետաղական իրերը բացահայտելու համար:

⁴⁹ National Centre for State Courts, Court Security Resource Guide, <http://www.ncsc.org/Topics/Courthouse-Facilities/Court-Security/Resource-Guide.aspx>



Լրացուցիչ գնությունը ներառում է մետաղական իրերի հեռացումը և ձեռքի մետաղորսիչ սարքով ստուգում: Ցանկացած անձ, ով հրաժարվում է անցնել գնություն, չի կարող մուտք գործել դատարան:

Անձինք, ովքեր ունեն ցանկացած տիպի էլեկտրոնային սարքեր, թղթապանակ, պորտֆել պայուսակ, բոլոր նման իրերը պետք է անցնեն *սկաների միջով*: Հրաժարվող անձը չի կարող մուտք ունենալ դատարանի շինություն: Եթե սկաներ սարքի միջով անցնելուց հետո կամ անձնական գնությամբ Ծառայության աշխատակիցը հանգում է հետևության, որ անձը կրում է զենք, պայթուցիկ կամ այլ արգելված իր նա կարող է ձերբակալվել:

Անձինք, ովքեր չեն ենթարկվում գնության

- Ինդիանայի Հարավային օկրուգի օկրուգային դատավորները
- Նույն օկրուգի մագիստրոս դատավորները
- Նույն օկրուգի սնանկության դատարանի դատավորները
- Մարշալների ծառայության աշխատակիցները և պայմանագրով աշխատողները, ովքեր օրենքով լիազորված են կրելու հրազենք
- ԱՄՆ Դաշնային պաշտպանիչ Ծառայության անվտանգության աշխատակիցները, ովքեր օրենքով լիազորված են զենք կրելու
- Կառավարության աշխատակիցները, բացառությամբ պայմանագրով աշխատողների
- Իրավաբանները (Attorneys) և Ինդիանայի հարավային օկրուգի իրավաբանների ծառայության կողմից ուղղակիորեն ներգրավված աշխատակիցները, Ինդիանայի հարավային օկրուգի Հանրային պաշտպանը, Ինդիանայի հարավային օկրուգի հոգաբարձուի ծառայությունը, Ինդիանայի հարավային օկրուգի եկամուտների ծառայությունը:

Միաժամանակ, այս անձանց արգելվում է ներս բերել հրազեն, պայթուցիկ ու օրենքով արգելված այլ նյութեր: Այս կանոնը խախտելու դեպքում արգելված իրը վերցվում է, անձը կորցնում է այս արտոնությունը և կարող է ենթարկվել օրենքով նախատեսված այլ պատասխանատվության:⁵⁰

Անվտանգության առավել խստացված մեխանիզմ է կիրառվում , օրինակ, օդանավակայանում, որը հիմնվում է Եվրոպական Հանձնաժողովի կողմից ընդունված «Ավիցիայի ոլորտում

⁵⁰ United States District Court Southern Disctrict of Indiana, General Order in the Matters of Security Procedures, <http://www.insb.uscourts.gov/sites/insb/files/Court-Security-General-Order.pdf>



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
PROTECTION OF RIGHTS WITHOUT BORDERS NON-GOVERNMENTAL ORGANIZATION

անվտանգության կանոնակարգի» վրա: Ի թիվս այլ կանոնների, այս փաստաթուղթը սահմանում է զննության շրջանակներում կիրառվող և զննությանն առնչվող հիմնական հասկացությունները, իրականացվող զննության մեթոդը և այլ մանրամասներ, որոնք կոնկրետ և հստակ կերպով անձի համար սահմանում են զննության գործընթացում հնարավոր կամայականությունների կանխարգելման երաշխիքները⁵¹:

⁵¹ Corrigendum to Commission Regulation (EU) No 185/2010 of 4 March 2010 laying down detailed measures for the implementation of the common basic standards on aviation security, [http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex:32010R0185R\(02\)](http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex:32010R0185R(02))



Դատական սակցիաների կիրառումը ամբաստանյալի պաշտպանության իրավունքի ենթատեքստում

Ամբաստանյալի՝ իր ընտրած պաշտպանի կողմից պաշտպանության իրավունքը երաշխավորված է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով՝ (արդար դատաքննության իրավունք) և հանդիսանում է արդար դատաքննության իրավունքի հիմնարար տարր: Ամբաստանյալը չի կորցնում իր այս իրավունքը դատաքննությանը չներկայանալով կամ դատաքննության ընթացքում դատաքննության կարգի խախտում թույլ տալով: Եթե նույնիսկ օրենսդրությունը նպատակ է հետապնդում կանխել, անհարգելի բացակայությունները կամ ամբաստանյալի ոչ պատշաճ վարքագիծը, անթույլատրելի է պատժել նման վարքագիծը իրավական օգնության ապահովմանը խոչընդոտներ ստեղծելու միջոցով: Օրենսդրական պահանջնը կարող է ապահովվել՝ առանց նրան պաշտպանության իրավունքից զրկելով: Սույն պայմաններում, անձի պաշտպանության իրավունքը գերակա է նրա ներկայությունը կամ դատական նիստի ընթացքում պատշաճ վարքագիծն ապահովելու պահանջին:⁵²

Իր ընտրությամբ պաշտպանի միջոցով պաշտպանվելու իրավունքը դատաքննության արդարացիության հիմնաքարն է, և անձը չի կարող զրկվել դրանից՝ դատարանում նրա պատշաճ վարքագիծը ապահովելու անհրաժեշտությունից ելնելով:

Միաժամանակ, այն դեպքերում, երբ ամբաստանյալը դատական նիստերի դահլիճից հեռացվել է, և դատական նիստերը շարունակվում են նրա բացակայությամբ, պաշտպանությունը պետք է իրականացվի բացառապես ամբաստանյալի կողմից ընտրված պաշտպանի միջոցով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Կարատասն ու Սարին ընդդեմ Ֆրանսիայի գործով վճռում ⁵³ արձանագրել է, որ ամբաստանյալի բացակայությամբ քննող գործերով (in absentia) նրա պաշտպանությունը պետք է իրականացվի բացառապես իր կողմից ընտրված փաստաբանի կողմից, հակառակ դեպքում անձի պաշտպանության իրավունքը կխախտվի, ինչը հիմք է գործի վերաբացման:

Հետևաբար, դատարանը պետք է հարգի անձի իրավունքը՝ իր բացակայությամբ գործի քննության դեպքում, այդ թվում՝ նրա նկատմամբ դատական նիստերի դահլիճից հեռացնելու դեպքում, պաշտպանությունն իրականացնելու իր ընտրած պաշտպանի կողմից:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Ջանան ընդդեմ Թուրքիայի ⁵⁴ գործում արձանագրել է անձի պաշտպանության իրավունքի խախտում, երբ ամբաստանյալը բարձրացրել է ընթացակարգային առարկություններ կամ ցանկացել դատարանին դիմել քրդերենով, ինչը ներպետական դատարանի կողմից դիտարկվել է որպես անձամբ պաշտպանվելու և դատարանում ներկա լինելու իր իրավունքից հրաժարում: Դատարանն արձանագրել էլ, որ կոնվենցիոն իրավունքից հրաժարվելը պետք է աներկիմաստ: Հետևաբար,

⁵² Van Geysegem v. Belgium, App. no. 26103/95, §§ 34-35, 21 January 1999.

⁵³ Karatas and Sari v. France, App no. 38396/97, 16 May 2002.

⁵⁴ Zana v. Turkey, App. no 18954/91, §§ 68-73, 25 November 1997.



հաշվի առնելով դատական քննության հնարավոր հետևանքները ամբաստանյալի համար, ներառյալ՝ սպասվող պատիժը, դատավարությունը չի կարող համարվել արդար առանց ամբաստանյալի կողմից անձամբ ներկայացված ապացույցների ուղղակի գնահատման:

Ավելին, դատարանը մի շարք գործերով հաստատել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքից հրաժարվելը պետք է լինի ազատ,⁵⁵ գիտակցված /անձը պետք է գիտակցի իրավունքից հրաժարվելու հետևանքները/, ինչպես նաև չպետք է հակասի հանրային կարևոր շահի:⁵⁶

Հետևաբար, քանի դեռ ամբաստանյալն աներկիմաստ, ազատ և գիտակցված դրսևորմամբ չի հրաժարվել իր ընտրած փաստաբանի կողմից պաշտպանության իրավունքից, դատարանը պարտավոր է հարգել և ապահովել իր կողմից ընտրված պաշտպանի կողմից ամբաստանյալի պաշտպանության իրավունքի իրականացումը: Այն դեպքերում, երբ ամբաստանյալը հեռացված է դատական նիստերի դահլիճից և զրկված է անձամբ իր պաշտպանությունը իրականացնելու իրավունքից, առանց նրա կողմից ընտրված պաշտպանի կողմից դատական նիստը շարունակվել չի կարող:

Պաշտպանի և իր պաշտպանյալի միջև հարաբերությունները կարգավորվում են նրանց միջև պայմանավորվածության /պայմանագրի/ և պաշտպանյալի կողմից պաշտպանին տրված լիազորությունների և հանձնարարությունների շրջանակներով: Փաստաբանները քրեական գործով վարույթին մասնակցում են բացառապես ամբաստանյալի համաձայնությամբ: Հետևաբար, եթե ամբաստանյալը իր պաշտպանին չի լիազորում, չի հանձնարարում կամ արգելում է մասնակցելու իր բացակայությամբ իրականացվող դատական քննությանը, գործում է նույն չափանիշը, և ամբաստանյալի կողմից նման իրավասության բացակայության պայմաններում փաստաբանն իրավասու չէ շարունակելու անձի պաշտպանությունը՝ ելնելով հենց ամբաստանյալի պաշտպանության իրավունքի գերակայությունից:

Փաստաբանների նկատմամբ կիրառվող սանկցիաները սահմանվում են Հի Դատական օրենսգրքով: Ըստ ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1 հոդվածների՝ դատարանը որպես դատավարության կողմի ներկայացուցիչ կամ պաշտպան, մասնակցող փաստաբանի նկատմամբ կարող է կիրառել նախազգուշացում և Փաստաբանական պալատին նրան պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմում ներկայացնելու դատական սանկցիաները: Փաստաբանին պատասխանատվության ենթարկելու համար Փաստաբանական պալատին դիմելն իրականացվում է նույն դատական նիստում կայացվող դատարանի առանձին որոշմամբ: Հետևաբար, առանց համապատասխան որոշման դատարանը չի կարող կիրառել դատական սանկցիան:

Դատարանի կողմից կիրառված սանկցիան պետք է համաչափ լինի փաստաբանի արարքի ծանրությանը և նպատակ հետապնդի ապահովելու դատարանի գործունեության բնականոն ընթացքը:

⁵⁵ Deweer v. Belgium, App. no 6903/75, §§48-54, 27 February 1980.
⁵⁶ Sejdovic v. Italy, App. no 56581/00, [GC], §§96-104, 01 March 2006.



Որպես դատական սանկցիայի կիրառման հիմք՝ ՀՀ դատական օրենսգիրքը նախատեսում է՝

- դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելը,
- դատավարական իրավունքների անբարեխղճորեն կամ դատավարական պարտականությունն անհարգելի չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը
- դատավորի օրինական կարգադրությունները չկատարելու միջոցով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելը:

Ներկայացված գործերով փաստաբանների նկատմամբ դատական սանկցիաներ կիրառելու հիմք է հանդիսացել առանց հստակ գործող կանոնակազմի իրականացվող անձնական զննության պահանջից հրաարվելը, որի հետևանքով փաստաբաններին արգելվել է մտնել դատական նիստերի դահլիճ կամ երբ փաստաբաններն իրենց պաշտպանյալի հանձնարարությամբ հեռացել են նիստերի դահլիճից:

Այս առնչությամբ ներկայացված գործերով դատարանների կողմից փաստաբանների նկատմամբ կարգապահական պատասխանատվություն կիրառելու համար Փաստաբանական պալատին դիմումներ ներկայացնելը ոչ այլ ինչ է, քան փաստաբանի՝ մասնագիտական գործունեությամբ պայմանավորված հետապնդում: Այս հիմքով, ՀՀ Փաստաբանների պալատի կողմից հնարավոր կարգապահական պատասխանատվության կիառումը հիմք է նաև ամբաստանյալի պաշտպանության իրավունքի խախտման:

Ըստ փաստաբանների դերի հիմնարար սկզբունքների մասին⁵⁷ ՄԱԿ-ի չափանիշների՝ պետությունը պարտավորություն է կրում ապահովելու, որ փաստաբանները իրականացնեն իրենց մասնագիտական գործառնությունները առանց ահաբեկման, խոչընդոտման, ոտնձգությունների կամ անհարկի միջամտությունների, կարողանան տեղաշարժվել և իրավախորհրդատվություն տրամադրել իրենց վստահորդներին ինչպես պետության ներսում, այնպես էլ դրանից դուրս, չպետք է ենթարկվեն, կարգապահական կամ դատական հետապնդումների, ֆինանսական կամ այլ պատասխանատվության կամ դրանց սպառնալիքների իրենց մասնագիտական պարտականությունների և վարքագծին համապատասխանող ցանկացած գործողությունների կատարման համար: Որևէ դատական կամ վարչական մարմին չի կարող հրաժարվել ճանաչել փաստաբանի իրավասությունը հանդես գալու իր վստահորդի համար, քանի դեռ փաստաբանը չի որակագրկվել ներպետական օրենսդրությանը և պրակտիկային համապատասխան, և այս սկզբունքներին համաձայն:

⁵⁷ Basic Principles on the Role of Lawyers Adopted by the Eighth United Nations Congress on the Prevention of Crime and the Treatment of Offenders, Havana, Cuba, 27 August to 7 September 1990



Հրապարակային նիստերին մասնակցող անձանց անձնական տվյալների հավաքագրում

Անձի անձնական տվյալների պաշտպանությունը ևս իրականացվում է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի ներքո և այդ գործընթացին ևս վերաբերելի են անձի անձնական ու ընտանեկան կյանքի միջամտության իրավաչափության գնահատման չափանիշները:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը սահմանել է, որ ներպետական օրենսդրությունը պետք է բավարար երաշխիքներ տրամադրի անձնական տվյալները 8-րդ հոդվածով սահմանված երաշխիքների խախտմամբ օգտագործելու դեմ: Նման երաշխիքները կարևորվում են հատկապես, երբ անձնական տվյալները ենթարկվում են ավտոմատ մշակման, ինչպես նաև երբ տվյալները հավաքվում են և պահվում պետության գործակալների կողմից: Պետական գործակալները պարտավորվում են անձնական տվյալները պահել և օգտագործվել կոնկրետ նպատակով, անձի համաձայնությամբ, ինչպես նաև կոնկրետ օրենսդրական հիմքի առկայությամբ⁵⁸:

Կոնվենցիայի 8-րդ հոդվածի ներքո անձնական տվյալների պաշտպանության հարցը կարող է ծագել տարբեր հարթություններում՝ ներառելով տվյալների հավաքումը, պահպանումն ու օգտատործումը: Յուրաքանչյուր փուլում անհրաժեշտ է, որ առկա լինեն համարժեք երաշխիքներ, որոնք կկանխեն տվյալների հավաքագրման և պահպանման չարաշահումները⁵⁹: Եվրոպական դատարանը սահմանել է նաև, որ տվյալները կարող են հավաքվել և պահվել հանցագործությունների բացահայտման և հետագա հանցագործությունները կանխելու նպատակով⁶⁰:

Համաձայն ԵԽ Նախարարների Կոմիտեի No R (87) 15 հանձնարարականի՝ Ոստիկանության կողմից անձնական տվյալների պահպանումը սահմանափակվում է այնքանով, որքանով որ անհրաժեշտ է իրական վտանգի կամ հանցագործության կանխման նպատակով⁶¹:

*ՀՀ օրենսդրության վերը ներկայացված համապատասխան կարգավորումների համաձայն՝
 դատական կարգադրիչն իր գործառույթներն իրականացնելու նպատակով իրավունք ունի
 պարզելու դատարան մուտք գործող, դատական նիստերի դահլիճում գտնվող, ինչպես նաև
 դատական սանկցիայի ենթարկված անձի ինքնությունը:*

Օրենսդրական տվյալ կարգավորման շրջանակներում ակնհայտորեն անձի անձնական տվյալների, այդ թվում անձնագրի տվյալները հավաքելու, իրավասություն դատական կարգադրիչները փաստացի չունեն:

⁵⁸ Judgment ECHR 29.04.2014 L.H v. Latvia, Judgment ECHR 04.12.2008 S and Marper v. UK

⁵⁹ Judgment 13.11.202 MM v. UK

⁶⁰ S and Marper v. UK, 04.12.2008

⁶¹ Council of Europe Committee of Ministers, Recommendation No. R(87) 15
https://www.privacycommission.be/sites/privacycommission/files/documents/recommendation_87_15.pdf



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի ապրիլից-հուլիսի 10-ն ընկած ժամանակահատվածում ընթացող հինգ դատավարությունների⁶²՝ «Սասնա Շռեր» խմբի գործողություններ, դրան շաղկապված իրադարձությունների մասնակիցների նկատմամբ քրեական հետապնդումների հիմքով իրականացվող դատաքննություններ, ինչպես նաև Վահան Շիրխանյանի և այլոց գործի դատաքննություններ, շրջանակներում արձանագրվել են մարդու իրավունքների, և հատկապես՝ արդար դատաքննության իրավունքի խախտումներ: Այդ խախտումները դրսևորվել են.

- դատական նիստերին մասնակցող քաղաքացիների նկատմամբ հետապնդումներով,
- փաստաբանների մասնագիտական գործունեությանը խոչընդոտելով,
- փաստաբանների նկատմամբ դրսևորվող հետապնդումներով և ճնշումներով,
- ամբաստանյալների նկատմամբ կիրառված բռնություններով և հետապնդումներով:

Հետապնդումներ դատական նիստերին մասնակից քաղաքացիների նկատմամբ

Ներկայացված գործերով բաց, հրապարակային դատաքննության մասնակցության համար քաղաքացիները ենթարկվում են անձնական զննության, ի տարբերություն նույն հրապարակային սկզբունքով իրականացվող այլ դատաքննությունների: Ավելին՝ ներկայացված գործերով նիստերի մասնակցության համար դատարան մուտք գործելիս քաղաքացիները «հաշվառվում են»՝ դատական կազադիրչների կողմից հավաքագրվում են քաղաքացիների անձնագրային տվյալները, այնուհետև ոստիկանության աշխատակիցներն այցելում են այդ քաղաքացիներին՝ պահանջելով դատական նիստերին այլևս չմասնակցել:

Ներկայացված գործերով նիստերից առաջ դատարանի շենքի մոտ ոստիկանությունն ուժեր է կենտրոնացրել, արգելել է քաղաքացիներին դատարանի շենք մտնել՝ պատճառաբանելով, որ նիստերի դահլիճում բոլոր տեղերն արդեն զբաղեցված են: Այդ տարածքում ոստիկանության կողմից քաղաքացիների նկատմամբ դրսևորվել են բռնություններ, բերման են ենթարկվել քաղաքացիներ:

Փաստաբանները նշել են, որ նման գործողությունները նպատակ են հետապնդում սադրել քաղաքացիներին, որպեսզի խժոժություններ և անկարգություններ սերմանեն: Բացի այդ, դատական նիստերին մասնակցող քաղաքացիների նկատմամբ նման վերաբերմունքն, ըստ էության, փորձ է նաև ճնշել դատավարությանը մասնակցելու ցանկություն ունեցող քաղաքացիներին և սահմանափակել նրանց մասնակցությունը:

⁶² Սույն դատական գործերն ընտրվել են բացառապես դրանց շրջանակներում դրսևորված խախտումների հիմքով: Դատավարությունների շրջանակներում քննվող քրեական գործերի մանրամասները տես Հավելված 1:



Միջամտություն փաստաբանի մասնագիտական գործունեությանը և խոչընդոտում

Ներկայացված դատական գործերի քննության շրջանակներում փաստաբանները նույնականացվել են իրենց պաշտպանյալների հետ և նրանց նկատմամբ հետապնդումներ են սկսվել իրենց մասնագիտական պարտականությունները կատարելու առնչությամբ:

Ներկայացված գործերով ներգրավված փաստաբանները ենթարկվել են անձնական զննության. դատաբանի մուտքի մոտ մետաղորսիչ ձեռքի սարքի միջոցով իրականացվել է փաստաբանների մարմնի և անձնական իրերի ստուգում: Մետաղորսիչ սարքի ցանկացած ահագանգի դեպքում կարգադրիչների կողմից պահանջ է ներկայացվել բացել և ներկայացնել ահագանգի առիթ հանդիսացած առարկան: Նույնիսկ այն դեպքում, երբ ակնհայտ է եղել, որ մետաղորսիչ սարքն ահագանգում է այնպիսի առարկաների առկայության պատճառով, ինչպիսիք են մետաղադրամները, հագուստի, պայուսակի մետաղ պարունակող դեկորացիաները, կարգադրիչները միևնույն է հարկադրել են հրապարակային բացել պայուսակները, դրամապանակները, դատարկել գրպանները և դրանց պարունակությունը ցուցադրել հրապարակայնորեն, բոլորի ներկայությամբ⁶³:

Դատաբան մուտք գործելու համար փաստաբանների զննությունը չի հանդիսանացել միասնական պրակտիկայի դրսևորում, այն երբևէ նախկինում չի իրականացվել, իսկ դատական գործերի ընտրությունը, որոնց մասնակցության համար իրականացվում է անվտանգության ստուգում, կոնկրետ, կանխատեսելի և արդարացի ընտրության չափանիշների հիման վրա չի իրականացվել:

Ավելին՝ փաստաբանները նշել են, որ դատական նիստերին մասնակցող դատախազներին նույն սկզբունքով զննության չեն ենթարկում, արձանագրվել են դեպքեր, երբ նույն քրեական գործով դատական նիստին մասնակցող փաստաբաններից մի քանիսին ենթարկել են զննության, մյուսներին՝ ոչ:

Օրենքն ընդհանրական կարգով սահմանում է դատական կարգադրիչների իրավասություններն անձի ինքնությունը պարզելու, անձին դատական նիստերի դահլիճից հեռացնելու և դատաբան կամ դատական նիստերի դահլիճ մուտք գործող անձանց, նրանց իրերի զննության մասով: Սակայն դրանց իրականացման կարգի և իրականացման միջոցների վերաբերյալ ներպետական օրենսդրությամբ (օրենք, ենթաօրենսդրական որևէ այլ ակտ) որևէ կարգավորում չի ապահովում:

Բացակայում է նաև դատական կարգադրիչների կողմից օգտագործվող տեխնիկական սարքավորումների, այդ թվում մետաղորսիչ սարքի կիրառման ընթացակարգային որևէ կանոն, որին պետք է հետևեն դատական կարգադրիչները: Սա հանգեցնում է մի իրավիճակի, որտեղ իշխանության գործակալների՝ կարգադրիչների կողմից կամայականության դրսևորումն անկառավարելի է և անխուսափելիորեն բերում է մարդու իրավունքների խախտման:

⁶³ hrparak.am, Լարված մթնոլորտում տեղի ունեցավ Սեֆիլյանի գործով դատական նիստը. տեսանյութ, <http://hrparak.am/?p=148969&l=am%2Fflarvac+mtnolortum+texivo%D6%82necav+sefilyani+gorcov+datakan+nisty+tesanyut+fotosharg>



Փաստաբանների պնդմամբ՝ նման գործողություններով իշխանությունը փորձում է ճնշել իրենց, մեկուսացնել դատավարությունները և ստեղծել դատավարության իրականացման պատրանք, որի արդյունքում «Մասնա Ծոեր» խմբի անդամները պատասխանատվության կենթարկվեն դոնիակ դատական քննության շրջանակներում ⁶⁴:

Հետապնդումներ փաստաբանների նկատմամբ

Դատական նիստերի մասնակցության համար կիրառվող անվտանգության ստուգման բոլոր այն դեպքերում, երբ փաստաբանները հրաժարվել են այլ անձանց ներկայությամբ հրապարակային ցուցադրել անձնական իրերը, կարգադրիչները դա որակել են որպես իրենց օրինական պահանջին ենթարկվելու մերժում և փաստաբաններին թույլ չեն տվել դատական նիստերի դահլիճ մտնել: Փաստաբանների բացակայության հիման վրա դատարանը դիմել է Փաստաբանների պալատի նախագահին՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու պահանջով⁶⁵:

Փաստաբանների նկատմամբ կիրառվել է սանկցիա նաև բոլոր այն դեպքերում, երբ պաշտպանները հետևել են իրենց պաշտպանյալների հանձնարարությանը: Այն բանից հետո, երբ դատավորը նիստերի դահլիճից հեռացրել է ամբաստանյալին, ամբաստանյալն իր պաշտպանին խնդրել է իր բացակայությամբ չշարունակել նիստը, և պաշտպանը հետևել է նրա հանձնարարությանը: Նման վարքագծի համար ևս դատարանը միջնորդություն է ներկայացրել ՀՀ Փաստաբանների պալատ՝ պաշտպանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար:

Ներկայացված գործերի շրջանակներում փաստաբաններին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդություն են ներկայացրել նաև ՀՀ ոստիկանությունը, ՀՀ դատախազությունը այն բանի համա, որ փաստաբանները քննադական գնահատական են հնչեցրել այդ մարմինների գործունեության հասցեին:

Դատաքննության ընթացքում ամբաստանյալների նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցներ

2016 թվականի դեկտեմբերի 2-ից մեկնարկած Վահան Շիրխանյան և այլոք գործով դատաքննության, ինչպես նաև ներկայացված մյուս չորս դատական քննությունների ընթացքում նախագահող դատավորները սանկցիաներ են կիրառել նաև ամբաստանյալների նկատմամբ՝ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու հիմքով:

Որպես անհարգալից վերաբերմունք՝ դատարանը գնահատել է ամբաստանյալի կողմից առանց դատավորի թույլտվության խոսելը, այն դեպքերը, երբ վնասվածքներ և առողջական

⁶⁴ «Ազատության TV» լրատվական կենտրոն, 03 հունիսի 2017թ., -30 րոպե, Մուշեղ Շուշանյանի հարցազրույց, <https://www.youtube.com/watch?v=RrnBWP4wz5I>
⁶⁵ Azatutyun.am, Դատավորը դահլիճից հեռացրեց Ժիրայր Սեֆիյանին ու Ներսես Պողոսյանին, 27 հունիսի 2017թ., <https://www.azatutyun.am/a/28581688.html>



խնդիրներ ունեցող ամբաստանյալը չի կարողացել ոտքի կանգնել: Բոլոր այս դեպքերում ամբաստանյալները հեռացվել են դատական նիստերի դահլիճից:

Ամբաստանյալների նկատմամբ պատասխանատվության կիրառումը և նրանց դատական նիստերի դահլիճից հեռացնելը շարունակական բնույթ է կրում ներկայումս ընթացող դատական նիստերի ժամանակ:

Բռնություններ ամբաստանյալների նկատմամբ

2017 թվականի հունիսի 28-ին դատական նիստը բացելուց առաջ հենց դատական նիստերի դահլիճում կարգադրիչները և ոստիկանությունը բռնության են ենթարկել նիստի մասնակից ամբաստանյալներ Արեգ Կյուրեղյանին, Սմբատ Բարսեղյանին և Մխիթար Ավետիսյանին⁶⁶: Նույն օրը, նույն դատարանի նկուղում ոստիկանության կողմից Արարտ Խանդոյանը, Արեգ Կյուրեղյանը, Սմբատ Բարսեղյանը և Մխիթար Ավետիսյանը ենթարկվել են տևական ծեծի:

ՀՀ ոստիկանությունը հերքել է այն տեղեկությունը, թե իբր «Սասնա Ծռեր» խմբի անդամները բռնության են ենթարկվել: Ոստիկանությունը նշել է, որ հասարակական կարգը խախտելու և ոստիկանության ծառայողների օրինական պահանջներին չենթարկվելու համար այդ անձինք դուրս են բերվել դատական նիստերի դահլիճից: Ըստ ոստիկանության՝ «Սասնա Ծռեր» խմբի անդամների մոտ վնասվածքներն առաջացել են, քանի որ նրանք հարվածել են խցերի դռներին ձեռքերով և ոտքերով:

«Սասնա Ծռեր» խմբի գործողությունների և դրան շաղկապված իրադարձությունների մասնակիցների նկատմամբ քրեական հետապնդումների հիմքով իրականացվող դատաքնությունների, ինչպես նաև Վահան Շիրխանյանի և այլոց գործի դատաքնությունների ժամանակ տեղի են ունենում մարդու իրավունքների այնպիսի խախտումներ, որոնց համակցությունը հանգեցնում է աղար դատաքնության իրավունքի լայնածավալած խախտումների:

⁶⁶ Հելսինկյան ասոցացիա, անկախ լրագրողների ցանց, Աննախաղեպ բռնություններ՝ «Սասնա ծռեր» - ի գործով դատավարության ժամանակ, 28 հունիսի 2017թ. , <https://www.youtube.com/watch?v=aWHirBp8kcg>



ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ Փաստաբանների պալատ

1. Անհապաղ ստանձնել ներկայացված գործերում ընդգրկված փաստաբանների պաշտպանությունը և հանդես գալ հրապարակային դիրքորոշմամբ՝ բացառելու համար փաստաբանների անձի և մասնագիտական գործունեության նկատմամբ ցանկացած ոտնձգություն, այդ թվում՝
 - առանց իրավական կանոնակարգերի, իրավաչափ և անհրաժեշտ նպատակի առկայության փաստաբաններին զննության ենթարկելը:
2. Զերծ մնալ և բացառել ներկայացված գործերով ներգրավված փաստաբանների նկատմամբ կարգապահական պատասխանատվության կիրառումը, այդ թվում՝
 - ոչ իրավաչափ զննություն անցնելու պահանջից հրաժարվելու պատճառով դատարան մուտք չգործած և դատական նիստին չներկայացած փաստաբաններին դատավորների կողմից ներկայացված կարգապահական պատասխանատվության ենթարկելու պահանջի դեպքերում,
 - իր պաշտպանյալի հանձնարարությունը կատարելու և դատական նիստին չմասնակցելու հիմքով փաստաբաններին կարգապահական պատասխանատվության ենթարկելու պահանջի դեպքերում,
 - ՀՀ ոստիկանության, ՀՀ դատախազության պահանջով փաստաբանի կողմից իր կարծիքն ազատ արտահայտելու հիմքով փաստաբաններին կարգապահական պատասխանատվության ենթարկելու պահանջի դեպքերում:
3. ՀՀ Դատական դեպարտամենտը, ՀՀ դատախազությունը, ՀՀ ոստիկանությունը և պետական այլ մարմիններ պետք է հստակ ազդակ ստանան, որ ՀՀ փաստաբանների պալատը հանդես չի գալիս պետական մարմինների ոչ իրավաչափ գործողություններն օրինականացնելու դիրքերից:

ՀՀ դատական դեպարտամենտ

4. Դադարեցնել կարգադրիչների կողմից ներկայացված գործերով ներգրկված փաստաբանների զննության ոչ իրավաչափ գործընթացը,



5. Անհապաղ մշակել դատարան մուտք գործող անձանց զննության, ներառյալ տեխնիկական միջոցների կիրառումը, կանոնակարգ,
6. Ապահովել դատական կարգադրիչների կողմից փաստաբանների և դատական նիստերին մասնակցող անձանց իրավունքների և ազատությունների նկատմամբ հարգանքի դրսևորումը,
7. Դադարեցնել կարգադրիչների կողմից ներկայացված գործերով մասնակցող քաղաքացիների անձնագրային տվյալների հավաքագրումը, պահպանումը և այդ տվյալների փոխանցումը ՀՀ ոստիկանությանը,
8. Խիստ հստակ և վճռական ազդակ հնչեցնել ՀՀ ոստիկանությանը, դատական կարգադրիչներին, որ մարդը բարձրագույն արժեք է և Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների նկատմամբ յուրաքանչյուր ոտնձգություն պատժելի է:

ՀՀ արդարադատության խորհուրդ

9. Ապահովել ներկայացված գործերին մասնակցող դատավորների կողմից մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի դրսևորումը:
10. Հիմնվելով ներկայացված գործերով նախագահող դատավորների կողմից մարդու իրավունքների խախտումների փաստերի վրա՝ կարգապահական վարույթ հարուցել և պատասխանատվության ենթարկել խախտում թույլ տված դատավորներին:

Մարդու իրավունքների պաշտպանին

11. Ապահովել և իրականացնել մարդու իրավունքների խախտումների բացառմանն ուղղված վճռական գործողություններ և չսահմանափակվել այդ խախտումների վերաբերյալ տվյալների զուտ փաստագրմամբ:

Կոչ ենք անում ՀՀ իշխանություններին

Բացառել քաղաքական հետապնդումները, որոնք իրականացվում են ընդվզում իրականացրած անձանց, նրանց պաշտպանների և այն բոլոր քաղաքացիների նկատմամբ, ովքեր հետաքրքրություն են դրսևորում տեղի ունեցող գործընթացների նկատմամբ, մասնակցում դատաքննություններին:

Միջազգային կազմակերպություններին, որոնք մտահոգված են մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի բացակայությամբ և խախտումներով

12. Անհապաղ ահազանգ հնչեցնել ՀՀ իշխանություններին՝ մարդու իրավունքների բիրտ խախտումները դադարեցնելու և օրինականության սկզբունքը հաստատելու պահանջով:



Մասնավորապես՝

- Ապահովել արդար դատաքննության իրավունքի անխափան և արդյունավետ իրականացումը՝ վերացնելով ամբաստանյալների նկատմամբ կիրառվող այնպիսի հետապնդումներն, ինչպիսիք են կամայական նկատողությունները, դատարանի նիստերի դահլիճից հեռացումները,
- Ձեռնպահ մնալ փաստաբանների մասնագիտական գործունեության նկատմամբ դրսևորվող ոտնձգություններից և ոչ իրավաչափ միջամտությունից:
- Ապահովել ՀՀ-ում ընթացող ներկայացված դատական գործերի նկատմամբ միջազգային մոնիթորինգի իրականացումը:



Հավելված 1

Նախաքննության գործի համարը	Դատաքննության գործի համարը	Մեղադրանքն ըստ ՀՀ քրեական օրենսգրքի
<p><u>58213716</u> 2015թ. ապրիլից գտնվելով Հայաստանի Հանրապետության տարածքում, ստեղծել ու ղեկավարել է ՀՀ քաղաքացիներից կազմված հանցավոր համագործակցություն, կազմակերպված խմբի կազմում ապօրինի կերպով ձեռք է բերել, պահել, փոխադրել և կրել մեծ քանակությամբ զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր, պայթուցիկ սարքեր՝ նպատակ ունենալով Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը յուրացնել, այսինքն՝ զավթել՝ բռնություն գործադրելու կամ բռնություն գործադրելու սպառնալիքով, ինչը ավարտին չի հասցվել նրա կամքից անկախ հանգամանքներում, քանի որ հանցավոր համագործակցության մեջ ներգրավված անձինք բացահայտվել ու 2015թ. նոյեմբերի 25-ին վնասազերծվել են Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից:</p>	<p>ԵԿԴ/0298/01/16</p>	<p>ՀՀ Քրեական օրենսգրքի 223-րդ հոդված Հանցավոր համագործակցություն ստեղծելը կամ հանցավոր համագործակցությանը մասնակցելը, 235-րդ հոդված՝ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը, 300-րդ հոդված՝ իշխանությունը յուրացնելը:</p>
<p><u>69107716</u> 2016թ. հուլիսի 20-ին Երևան քաղաքում տեղի ունեցած հասարակական անվտանգությունը վտանգած բռնությամբ, ջարդելով, գույք ոչնչացնելով և վնասելով արտահայտված զանգվածային անկարգությունների ընթացքում բռնություն</p>	<p>N: ԵԵԴ/0101/01/16⁶⁷</p>	<p>ՀՀ Քրեական օրենսգրքի 225-րդ հոդված մաս 2՝ Զանգվածային անկարգություններ:</p>

⁶⁷ Սույն գործը առանձնացված է նույն ժամանակահատվածում ՀՀ Քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածով հարուցված քրեական գործերից, քանի որ այս գործի դատաքննության ընթացքում դրսևորվել է փաստաբանի նկատմամբ հետապնդում:



<p>է գործադրել՝ ոստիկանության աշխատակիցների նկատմամբ՝ ձեռքերով և ոտքերով հարվածներ է հասցրել իրենց ծառայողական պարտականությունները կատարող, իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության աշխատակիցներին, քաշքշել և փորձել է խլել ոստիկանության ծառայողի վահանը:</p>		
<p><u>62228816</u> 2015թ. ապրիլի 24-ին Երևան քաղաքում բռնություն գործադրելով, գույք ոչնչացնելով և վնասելով, ինչպես նաև իշխանության ներկայացուցչին զինված դիմադրություն ցույց տալով արտահայտված, հասարակական անվտանգությունը վտանգող զանգվածային անկարգություններ հրահրելու ուղղակի դիտավորությամբ, սկսած 2014թ. մայիսից կատարել է դրա կազմակերպմանն ուղղված նախապատրաստական գործողություններ, ինչպես նաև 17.07.2016թ. կազմակերպված խմբի կազմում ապօրինի կերպով ձեռք է բերել, պահել, փոխադրել և կրել հրազեն ու ռազմամթերք, ապա կազմակերպված խմբի կազմում, զենքի գործադրմամբ, կյանքի և առողջության համար վտանգավոր բռնությամբ՝ զավթել և պահել է շենքեր, շինություններ և տրանսպորտային միջոցներ՝ զուգորդված դրանք ոչնչացնելու, վնասելու սպառնալիքով, ինչպես նաև նույն եղանակներով պատանդ է վերցրել և պահել երկուսից ավելի անձանց, որոնք կատարել է զավթածը և պատանդներին ազատելու պայմանով պետությանը գործողություններ կատարելուն հարկադրելու նպատակով, նույն ժամանակ կազմակերպված խմբի կազմում, կյանքի համար վտանգավոր բռնություն</p>	<p>ԵԷԴ/0039/01/17</p>	<p>ՀՀ Քրեական օրենսգրքի 185-րդ հոդված մաս 3 կետ 1՝ Գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը, 218-րդ հոդված մաս 3 կետ 1՝ Պատանդ վերցնելը, 219-րդ հոդված մաս 3 կետ 1՝ Շենքեր, շինություններ, տրանսպորտի, հաղորդակցության կամ կապի միջոցներ զավթելը, 225-րդ հոդված մաս 1՝ Զանգվածային անկարգություններ, 235-րդ հոդված մաս 3՝ Ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը, 238-րդ հոդված մաս 4 կետ 1,2՝ Չենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր հափշտակելը կամ շորթելը:</p>



<p>գործադրելով, ինչպես նաև դրա գործադրման սպառնալիքով՝ հափշտակել է հրազեն ու ռազմամթերք , բացի այդ հրկիզման եղանակով դիտավորությամբ ոչնչացրել է տրանսպորտային միջոցներ՝ սեփականատերերին պատճառելով առանձնապես խոշոր չափերի վնաս:</p>		
<p><u>62228516</u> 24.04.2015 թվականին Երևան քաղաքում բռնություն գործադրելով, գույք ոչնչացնելով և վնասելով, ինչպես նաև իշխանության ներկայացուցչին զինված դիմադրություն ցույց տալով արտահայտված, հասարակական անվտանգությունը վտանգող զանգվածային անկարգություններ հրահրելու ուղղակի դիտավորությամբ, սկսած 2014 թվականի մայիսից կատարել է դրա կազմակերպմանն ուղղված նախապատրաստական գործողություններ, բացի այդ, 2015 թվականի նոյեմբերից մինչև 2016 թվականի մայիսի 18-ն ընկած ժամանակահատվածում, կազմակերպված խմբի կազմում ապօրինի կերպով ձեռք է բերել, պահել և փոխադրել հրազեն և ռազմամթերք, նպատակ ունենալով զենքի գործադրմամբ, կյանքի համար վտանգավոր բռնություն գործադրելով զավթել և պահել ռազմավարական նշանակության շենքեր, շինություններ, սակայն իր կամքից անկախ հանգանամքներով ավարտին չի հասցվել:</p>	<p>ԵԱԴԴ/0028/01/17</p>	<p>ՀՀ Քրեական օրենսգրքի 225-րդ հոդված մաս 1՝ Ջանգվածային անկարգություններ, 219-րդ հոդված մաս 3, կետ 1՝ Շենքեր, շինություններ, տրանսպորտի, հաղորդակցության կամ կապի միջոցներ զավթելը, 235-րդ հոդված մաս 3՝ Ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը</p>